Կրթության, Գիտության, Մշակույթի և Սպորտի Նախարարություն

«Մասնակցային դպրոց»

կրթական հիմնադրամ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Խումբ՝ Պատմություն

Թեմա՝ Դպրոցի տնօրենի ընտրության կարգում 2020-22թթ տեղի ունեցած փոփոխությունները դպրոցի կառավարման արդյունավետության առաջնապատկերին

Հետազոտող՝ Անդրանիկ Գրիգորյան

Կոտայքի մարզի Բյուրեղավանի Ս. Վարդանյանի անվան ավագ դպրոցի փոխտնօրեն

Բյուրեղավան 2022թ

Բովանդակություն

Բովանդակություն ---------- 2

Ներածություն ---------- 3

Պետական հանրակրթության ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգում 2021թ փետրվարին տեղի ունեցած փոփոխությունները մասնակցային ժողովրդավարության համատեքստում ---------- 5

Պետական հանրակրթության ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգում 2021թ օգոստոսի 27-ին տեղի ունեցած փոփոխությունների վերլուծական պատկերը ---------- 11

Պետական հանրակրթության ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 2022թ ապրիլին տեղի ունեցած փոփոխությունները՝ որպես հետընթաց մասնակցային ժողովրդավարության համատեքստից ---------- 13

Եզրակացություն ---------- 17

Գրականության ցանկ ---------- 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թագավարակն ու պատերազմը էական ազդեցություն թողեցին հասարակակեցության մեր ընկալումներում՝ փոխելով կյանքի արժեբանության առօրեական պատկերացումներն ու ժամանակի քննությունը հանձնած, բայց միևնույն ժամանակ հնացած դրույթները: Հարափոփոխ համընդհանրացման մեր օրերում էլ ավելի է լրջացել ազգապահպանության, էթնոլոգիական կերպարի պահպանման խնդիրները: Մարտահրավեր, ինչի հանգուցալուծման կարևորագույն թնջուկը գտնվում է հանրակրթական դպրոցում:

Մեզ բաժին հասած հետպատերազմյան դժվարին ու ծանր օրերին, առավել քան երբևէ, կարևորվում է կրթության և ազգային դպրոցի դերը: Ազգային դպրոցը, լինելով պետական քաղաքականության հենքը, նպատակաուղղված է համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված, մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորմանը: Անձ, որը կկրթվի ժամանակակից պահանջներին համապատասխան, պատրաստ կլինի կյանքի ընթացքում ճիշտ որոշումներ կայացնելու, կկարողանա դիմակայել ապագա մարտահրավերներին և իր ներդրումն ունենալ երկրի զարգացման ու հզորացման գործում:

Ստեղծված իրավիճակում կրթությունը նախևառաջ պետք է նպատակաուղղված լինի մեր երկրի ազգային և պետական անվտանգության պահպանմանը: Ժողովրդավարական հասարակության ձևավորման և ժողովրդավարական արժեքների պահպանման դժվարին ճանապարհին անչափ կարևոր է քննադատական մտածողությանը նպաստող հմտությունների զարգացումը: Այն հասարակությունը, որն ունակ է մտածելու, խնդիրը բազմակողմանիորեն վերլուծելու, հանդիսանում է պետության զարգացման հիմնական շարժիչ ուժը և կոմպետենտ աշխատուժ է օրեցօր զարգացող աշխարհում:

Մեր երկրում դեռևս 1990-ական թվականներին սկիզբ առած հանրակրթության ոլորտի բարեփոխումները առնվազն տիտրային առումով միտված են եղել հանրակրթական համակարգի մատչելիությանը, ներառականությանը և կառավարման ժողովրդավարական համակարգի ներդրմանը: Հատկապես ճգնաժամային մեր օրերում հասարակությունը և

պատկան մարմինները տեսան և գիտակցեցին հանրակրթության ոլորտում տարիներով կուտակված խնդիրները:

Պետական հանրակրթության ուսումնական հաստատության տնօրենի ընտրության *(նշանակման)* կարգում *2021*թ փետրվարին տեղի ունեցած փոփոխությունները մասնակցային ժողովրդավարության համատեքստում

Դպրոցի կառավարման օպտիմալ համակարգի փնտրտուքը հանրակրթության պատասխանատու շրջանակների առաջնային խնդիրն է եղել, սակայն առաջարկված տարբերակները հեռու են եղել դպրոցի կառավարման մասնակցային ժողովրդավարական տարատեսակից և միտված են եղել, վստահորեն պնդում եմ՝ այժմ էլ միտված են, իշխող քաղաքական միավորի քաղաքական պահանջնմունքները բավարարմանը: Սույն հետազոտության համար հիմք հանդիսացան Հանրակրթության մասին օրենքում, ինչպես նաև Պետական հանրակրթության ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգ հաստատելու մասին ընդհանուր ենթաօրենսդարական ակտ կոչված կառավարության 2010թ 319 Ն որոշում փաստաթղթում 2020թ-ից սկիզբ առած քանակական առումով թվով երեք փոփոխությունները: Վերոգրյալ փաստաթուղթը նշված ժամանակահատվածում առաջին փոփոխության ենթարկվեց 2021թ փետրվարին, այնուհետև՝ 2021թ օգոստոսի 27-ին և 2022թ մարտ ամսին[1]: Պետք է փաստենք՝ վերջին երկու փոփոխությունները կրու�էին պատճառահետևանքային բնույթ՝ հարթելով ի հայտ եկած խնդրահարույց դրույթները

Եթե առաջին փոփոխությունը (2021 փետրվար) բխում էր Հանրակրթության մասին օրենքում տեղի ունեցած փոփոխությունների պահանջից և միտված էր պետական հանրակրթական հաստատության տնօրենի ընտրության կարգում մասնակցային ժողովրդավարական տարատեսակի ամրապնդմանը, ինչպես նաև պայմանավորված էր Պետական հանրակրթական ուսումնական հաստատության

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docID=155452

տնօրենի ընտրության կարգում առկա բացերի արդյունքում հանրապետության մի շարք պետական ուսումնական հաստատություններում տնօրենի ընտրության գործընթացում առաջացած ճգնաժամերով, որոնք հիմնական քաղաքական երանգավորում էին ստանում: Օրինակներ են Աբովյանի քաղաքի առաջին ավագ դպրոցը , Չարենցավան քաղաքի երրորդ հիմնական դպրոցը, ինչպես նաև Ծիրակի, Լոռու, Տավուշի մարզերում տեղի ունեցած խնդրահարույց դիպվածները[2]: Բոլոր վերոնշյալ հանրակրթական ուսումնական հաստատություններին միավորում էր Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության կարգում առկա բացը, երբ Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի հավակնորդներից ոչ մեկը չէր հավաքում կառավարման խորհրդում առկա ութ ձայներից անհրաժեշտ հինգը խնդիրը տեղափոխվում էր Լիազոր մարմնի տիրույթ՝ ավագ դպրոցների պարագայում՝ ԿԳՄՍ նախարար, Երևան քաղաքի հիմնական դպրոցների դեպքում՝ Երևանի քաղաքապետ, իսկ մարզային հիմնական ուսումնական հաստատությունների դեպքում՝ տվյալ մարզի մարզպետ:

Հասարակակեցության մեր ընկալումներում տեղի ունեցած փոփոխությունների իմպերատիվը ստիպեց պատկան շրջանակներին հանրակրթության բարեփոխումների այս օղակը նույնպես համապատասխանեցնել ժամանակի պահանջներին: Սույն հետազոտության հիմնական նպատակն է ընդհանուր ենթաօրենսդրական ակտ հանդիսացող Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության կարգ փաստաթղթում նշված ժամանակահատվածում տեղի ունեցած փոփոխությունները մասնակցային ժողովրդավարության մոդելի համատեքստում:

2021թ փետրվարին Հանրակրթության մասին օրենքում տեղի ունեցած փոփոխությունները իրենց անդրադարձը պետք է ունենային նաև Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության կարգում: Փոփոխությունները հսկայածավալ էին և կրում էին հեղափոխական բնույթ, ինչը քաղաքական կամքի դրսևորման պարագայում կապահովեր հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության և գործունեության գործընթացը ժողովրդավարական մոդելի տիրույթ տեղափոխելու առաջին կարևոր քայլը:

[2] https://yerkirmedia.am/hy/article/2021/02/15/33867

Ըստ այդմ՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգում» փոփոխություն կատարելու մասին նախագիծ[3]: Առաջարկվում է խմբագրել ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման հավելվածը և սահմանել տնօրենի թափուր տեղի մրցույթի կազմակերպման նոր ժամկետներ, ինչպես նաև փոխել հաղթող ճանաչելու համար նախատեսված ձայների հարաբերակցությունը: Մասնավորապես հաղթող ճանաչվելու համար հավակնորդը պետք է ստանա կառավարման խորհրդի անդամների առնվազն երկու երրորդի «կողմ» ձայները (գործող կարգով տնօրենն ընտրվում էր ձայների մեծամասնությամբ):

Հաշվի առնելով, որ այս տարվա ապրիլից ուժի մեջ մտած կարգավորմամբ՝ հանրակրթական դպրոցի կառավարման խորհուրդը բաղկացած է 9 անդամից, տնօրեն ընտրվելու համար կպահանջվի առնվազն 6 «կողմ» ձայն: Հիշեցնենք, որ կառավարման խորհրդի 9 անդամից 5-ը նշանակվում են լիազոր մարմնի, 4-ը՝ մանկավարժական և ծնողական խորհուրդների կողմից՝ 2-ական ներկայացուցչով: Նոր կարգավորման արդյունքում ո՛չ լիազոր մարմնի, ո՛չ էլ դպրոցի ներկայացուցիչները չեն կարող միանձնյա որոշել, թե ով կստանձնի դպրոցի տնօրենի թափուր պաշտոնը: Այսպիսով՝ վերացվում է այն պրակտիկան, երբ կառավարման խորհրդի ձայները կիսվելու դեպքում տնօրենը նշանակվում էր ԿԳՄՍ նախարարի (ավագ դպրոցների պարագայում) և փոխվարչապետի (Երևանի քաղաքապետարանի և մարզային ենթակայության դպրոցների դեպքում) կողմից:

Առաջարկվող մեկ այլ փոփոխությամբ մրցույթին դիտորդի կարգավիճակով կարող են մասնակցել մարզպետարանի կամ Երևանի քաղաքապետարանի մասնագետները, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների և ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Նոր ժամկետներ

Նոր նախագծով դպրոցի կառավարման խորհուրդը տնօրենի թափուր տեղի մրցույթ հայտարարելու մասին որոշումն ընդունում է տվյալ հաստատության

[3] «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգում» փոփոխություն կատարելու մասին նախագիծ

տնօրենի պաշտոնավարման ժամկետը լրանալու օրվանից առավելագույնը 70, բայց ոչ պակաս, քան 66 աշխատանքային օր առաջ:

Մրցույթին մասնակցելու մասին հայտերն ընդունվում են www.azdarar.am կայքում՝ հայտարարության հրապարակման օրվանից սկսած՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում: Մրցույթն անցկացվում է հայտերի ընդունման վերջին օրվանից հետո՝ 10-րդ աշխատանքային օրը:

Աշակերտական, մանկավարժական ծնողական համայնքների դերի բարձրացում

Ըստ առաջարկվող նախագծի՝ հստակեցվել են աշակերտական, մանկավարժական և ծնողական համայնքների դերի բարձրացմանը միտված մեխանիզմները:

Մասնավորապես, դպրոցի տնօրենի պաշտոնակատարը (պարտականությունները կատարողը) պարտավոր է ապահովել.

- տնօրենի թափուր տեղի հավակնորդների հանդիպումը տվյալ հաստատության աշակերտական խորհրդի հետ՝ զարգացման ծրագիր կազմելու համար՝ այդ մասին դիմելուց հետո՝ առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում:
- տրամադրել գրավոր տեղեկատվություն՝ հաստատության գործունեության վերաբերյալ (տվյալներ մանկավարժական, աշակերտական համակազմի, ուսումնադաստիարակչական, արտադպրոցական գործունեության, կառավարման և խորհրդակցական մարմինների մասին, ինչպես նաև հավակնորդի կողմից ներկայացված գրավոր դիմումի հիման վրա հաստատության գործունեության վերաբերյալ անհրաժեշտ այլ տեղեկատվություն):

Մանկավարժական և ծնողական խորհուրդների կողմից դպրոցի կառն խորհրդում ընդգրկված անդամները պարտավոր են հավակնորդի ներկայացրած զարգացման ծրագիրը քննարկել մանկավարժական և ծնողական խորհուրդներում, ինչպես նաև հրապարակել տվյալ դպրոցի պաշտոնական կայքում: Ծնողական խորհրդում իրականացվող քննարկմանը կարող են մասնակցել նաև ծնողական խորհրդում չընդգրկված ծնողները:

Տնօրենի ընտրության ժամանակ դպրոցի կառավարման խորհրդում մանկավարժական և ծնողական համայնքների կողմից ընդգրկված անդամները պետք է իրենց ձայնը տան այն հավակնորդին, որի զարգացման ծրագրին հավանություն են տվել մանկավարժական և ծնողական խորհուրդները: Վերջիններս հավակնորդի ներկայացրած զարգացման ծրագրի վերաբերյալ իրենց եզրակացությունն արտահայտում են քվեարկությամբ:

Քվեարկության արդյունքում առավելագույն հավասար ձայներ հավաքած հավակնորդների միջև նույն օրն անցկացվում է կրկնակի քվեարկություն: Կրկնակի քվեարկությամբ, հավասար ձայների դեպքում, հավակնորդները համարվում են չընտրված, և մանկավարժական կամ ծնողական խորհուրդը տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար տվյալ մրցույթի ժամանակ չի ունենում իր թեկնածուն: Այս դեպքում ծնողական և մանկավարժական խորհուրդները ներկայացնող կառավարման խորհրդի համապատասխան անդամները մրցույթի ժամանակ քվեարկում են ազատ[4]:

Տեղի ունեցած փոփոխությունները դիտարկելով մասնակցային ժողովրդավարության տեսանկյունից՝ կարող ենք առանձնացնել ներքոգրյալ կարևոր նշագրումները՝

Ա. Պետական հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման խորհուրդը նախկին ութ անդամի փոխարեն բաղկացած է լինելու ինը անդամից: Պահպանվում էին ծնողական և մանկավարժական խորհուրդների երկուական անդամները, Լիազոր մարնի և պետական , տեղական ինքնակառավարման մարմինների անդամների թիվը ավելանում է ընդհանուր մեկով: Տեղի ունեցածը ոչ թե Լիազոր մարմնի վերահսկողության համամասնության ավելացում է նշանակում, այլ Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի հավակնորդի նարկայացրած ծրագրի շուրջ ուսումնական հաստատություն-պետական, տեղական ինքնակառավարման մարմին-լիազոր մարմին մինիմալ կոնսենսուսի կայացման հնարավորություն էր ստեղծում՝ բացառելով պետական ուսումնական հաստատության կառավարման խորհրդում ներառված ներկայացուցչական մարմիններից մեկի իմպերտիվ որոշում կայացնելու հնարավորությունը:

[4] https://escs.am/am/news/8631

Բ. Մասնակցային ժողովրդավարության տեսանկյունից շատ կարևոր էր պետական հանրակրթական ուսումնական մանակավարժական և ծնողական խորհուրդների դերակատարման մեծացումը տնօրենի ընտրության կարգում: Եթե նախկինում պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօերնի հավակնորդի հետ հանդիպելու, հարցեր տալու և քվերակելու հնարավորություն ունեին դպրոցի խորհրդակացական մարմիններից միայն մանկավարժական և ծնողական խորհուրդներից կառավարման խորհրդում ներգրավված երկուական ներկայացուցիչներ, ապա տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում մանկավարժական և ծնողական խորհուրդները ողջ կազմով մասնակցում են տնօրենին ընտրությանը, իսկ կառավարման խորհրդում ներկայացված վերոգրյալ խորհրդակացական մարմինների երկուական ներկայացուցիչները հիմնականում (որոշ բացառությամբ) հանդիասանում են այդ մարմինների կայացրած որոշման մեխանիկական փոխանցողներ:

Գ. Շատ կարևոր է նաև դպրոցի աշակերտական խորհրդի ոչ ֆորմալ ներգրավումը տնօրենի ընտրության գործընթացում:

Այսպիով պետական հանրակրթական ուսումնական հաստատության բոլոր շահառումները՝ պետությունը, տեղական ինքնակառավարման համակարգը, ծնողական և մանկավարժական համակազմերը, ինչպես նաև տվյալ ուսումնական հաստատությունում սովորողները ներգրավվում են պետական հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման կարևորագույն օղակի՝ պետական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության գործընթացում: Սույն փոփոխությունները ենթադրում էին պետական հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման խորհրդի փոփոխություն, ինչը միջանցիկ ժամանակահատվածում որոշակի խնդիրներ ստեղծեց հատկապես այն պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում, որտեղ 2021թ փետրվար-մայիս ամիսներին լրացել էր գործող տնօրենների պայմանագիրը կամ էլ վերոգրյալ անձինք անցել էին օրենքով սահմանված կարգով կենսաթոշակային տարիքի: Սույն կարգի համաձայն դեռևս չձևավորված կառավարման խորհուրդների առկայության պարագայում հնարավոր չէր կազմակերպել պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրություն, իսկ ուժի մեջ մտած կարգը միջանցիկ կարգավորումներ չէր պարունակում: Այդօրինակ խնդիր առաջացավ Բյուրեղավանի Ս.Վարդանյանի

անվան ավագ դպրոցում, երբ գործող տնօրենի՝ սահմանված կարգով 2021թ ապրիլի 16-ին կենսաթոշակային տարիքի անցնելուց հետո Բյուրեղավանի Ս.Վարդանյանի անվան ավագ դպրոց ՊՈԱԿ-ի տնօրենի մրցույթ հնարավոր եղավ անցկացնել միայն 2021թ հոկտեմբեր ամսին:

Պետական հանրակրթության ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգում *2021*թ օգոստոսի *27*-ին տեղի ունեցած փոփոխությունների վերլուծական պատկերը

2021թ փետրվարի 11-ին ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 4-Ի N 319-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ կատարված փոփոխություններում արդեն նույն թվականի օգոստոսի 27-ին նոր փոփոխություններ կատարվեցին: Փոփոխությունները կրում էին կոսմետիկ բնույթ և հիմնականում կարգավորում էին փետրվարի 11-ի փոփոխությունների բացերը, որոնք առաջացել էին որոշման կարգի դաշտային պայմաններում գործածման հետ[5]:

ՀՀ կառավարության 2010թ մարտի 4-ի 319-ն որոշման մեջ վեց ամսում կատարված երկու շտկումները վկայում են պատկան մարմինների կարողունակությունների ոչ բավարար մակարդակի, ինչպես նաև սեղմ ժամանակահատվածում առանց լուրջ հանրային քննարկումների կառավարության ընդհանուր ենթաօրենսդրական ակտում կատարված փոփոխություններում ի հայտ եկած բացերի մասին : Պետք է փաստել՝ նշված փաստաթղթում օգոստոսի 27-ին կատարված շտկումները վերաբերվում էին թվով 27 կետերի[6]:

Ինչևէ արդնեն 2021թ սեպտեմբերից սկսվեցին պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում առաջացած տնօրենի թափուր հաստիքների ընտրության գործընթացները համաձայն նոր կարգի, ինչը ենթադրում էր մասնակցային ժողովրդավարության կառավարման մոդելի ներդրում պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում: Ի դեպ, շատ կարևոր է արձանագրելը՝ տարբեր դպրոցներում տնօրենի ընտրության գործընթացում

[5] https://www.arlis.am/documentview.aspx?docid=155420
[6] https://www.arlis.am/documentview.aspx?docid=155420

առաջացած խնդիրները ոչ թե պայմանավորված են կարգի ժողովրդավարցման խնդիրներով, այլ շատ այլ գործոններով, որոնց վեկտորները տարաբևեռ ուղղվածություն ունեին:

Ամենամեծ համակրգային խնդիրը, որ առաջացավ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի թափոր պաշտոնի առաջացմամբ պայմանավորված ընտրական գործընթացներում որոշ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնական հաստատության տնօրենի մրցույթներրում թափուր պաշտոնի հավակնորդներից որևէ մեկի կողմից կառավարման խորհրդում անհրաժեշտ վեց ձայնի չստանալու պարագայում պետական հանրակրթական ուսումնական հաստատությունում տնօրեն չընտրվելու մասին արձանագրության կազմումն էր և նոր ընտրության նշանակումը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2021թ-սեպտեմբեր-2022թ մայիս ամիսներին հանրապետությունում եղել են պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ, որ նշված ութ-ինը ամիսներին հնարավոր չի եղել ընտրել պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրեն, ինչը ենթադրում է բացասական հետևանքների մի ողջ փունջ: Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի թիվ 5 հիմնական դպրոց, Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքի Ս.Վարդանյանի անվան ավագ դպրոց, Երևան քաղաքի թիվ 55 հիմնական դպրոց, Երևան քաղաքի Չեխովի անվան դպրոց և այլն: Լրատվական տիրույթում լայն տարածում գտան Բյուրեղավանի ավագ դպրոցի և Երևանի Չեխովի անվան դպրոցի դիպվածները[7]:

Վերոգրյալ երկու օրինակների տրամաբանությունը մեծամասամբ տարածվում է նաև այլ դիպվածների նկատմամբ: Մենք ականատեսն ենք դառնում հակասականության ներքոգրյալ սղագրությամբ.

Անունը կա, բայց ամանը դատարկ է:

Պետական հանրակրթության ուսումնական հաստատության տնօրենի ընտրության *(նշանակման)* կարգի *2022*թ ապրիլին

[7] https://168.am/2021/10/12/1591146.html
https://www.azatutyun.am/a/31803581.html

տեղի ունեցած փոփոխությունները՝ որպես հետընթաց մասնակցային ժողովրդավարության համատեքստից

Այսպիսով օրենսդրական մակարդակում պատկան մարմինների կողմից որդեգրված պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման մասնակցային ժողովրդավարության ռազմավարությունը տեղական չինովնիկների կողմից որոշ դեպքերում ամբիցիաների, քաղաքական նպատակահարմարության և սեփական չբավարաված նկրտումների բավարման տխեղծ իրականություն էր դառնում: Դիպվածներն, իհարկե, դժվար է ամբողջական իրողություն ներկայացնելը, բայց հենց այդ դիվածներն էլ ստիպեցին ՀՀ կառավարության ոչ ամբողջական երկու տարվա ընթացքում երրորդ անգամ փոխել իրենց իսկ կողմից մշակված պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենի ընտրության կարգը կամ այլ կերպ ասած՝ կառավարության 2010թ 319-ն որոշումը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության Հանրակրթության վարչության պետ Արսեն Բաղդասարյանի հանդես է եկել հաջորդիվ ներկայացվելիք մեկնաբանությամբ, ըստ որի գործող կարգավորմամբ, այն անձինք, որոնք ուզում են տնօրեն դառնալ կամ վերընտրվել պետք է նորից դիմեն, հավաստագիր ստանան, որ կարողանան մասնակցել տնօրենի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին: Նոր կարգավորումների համաձայն, գործող տնօրեններն այլևս հավաստագրման գործընթաց չեն անցնելու: Հավաստագրում միայն անցնելու են առաջին անգամ տնօրեն դառնալ ցանկացողները: Փոխարենն, այն տնօրենները, որոնց պաշտոնավարման ժամկետը լրանում է, իրենք պետք է ատեստավորման գործընթաց անցնեն, որի հիմքում դրված է լինելու իրենց կողմից ներկայացված զարգացման ծրագրի կատարողականը:

«Ներկայացված զարգացման ծրագրի կատարողականի հիման վրա էլ ձևավորված մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացության առկայության դեպքում նոր լիազոր մարմինը կընտրի տնօրեն: Այսինքն, եթե երեք հոգի իր ծրագրով դրական եզրակացություն է ստացել, ուրեմն լիազոր մարմինն այդ երեքից պետք է որոշի, թե ում ընտրի»,-ասաց նախարարության

ներկայացուցիչը: Լիազոր մարմինը կարող է լինել նախարարը, քաղաքապետը, մարզպետը: Արսեն Բաղդասարյանի խոսքով՝ իրենց նպատակն է, որ տնօրենը, որը հիմնական պատասխանատուն է կրթական որակի, կրթական գործընթացների համար, զբաղվի միայն դրանով: Վերապատրաստվի, ատեստավորվի միայն կրթության հետ կապված հարցերով և չզբաղվի վարչատնտեսական գործառույթներով: Մնացած գործառույթներն իրականացնելու է վարչատնտեսական հարցերը համակարգողը:

Ի՞նչ մասնագիտական հանձնաժողովի մասին է խոսքը, երբվանի՞ց է այն գործելու: Արսեն Բաղդասարյանը նշեց, որ 2023 թվականի հունվարի 1-ից դպրոցի խորհուրդը չի իրականացնելու մրցույթ և չի ընտրելու տնօրեն: Ձևավորվելու է մասնագիտական հանձնաժողով հավակնորդների ներկայացրած զարգացման ծրագրերը լսելու համար: Այդ հանձնաժողովը լիազոր մարմնին տալու է եզրակացություն և դրա հիման վրա էլ լիազոր մարմինը տվյալ ուսումնական հաստատությունում նշանակելու է տնօրեն: Մասնագիտական հանձնաժողովը ձևավորվելու է ենթաօրենսդրական ակտերով, կառավարության որոշմամբ[8]:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության Հանրակրթության վարչության պետի մեկնաբանությունը ՀՀ հանրակրթության մասին օրենքի փոփոխության նախաձեռնության, ինչպես նաև պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության կարգի փոփոխման վերաբերյալ ակնահայտորեն հետնահանջ է 2021թ փետրվարին ՀՀ կառավարության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենի ընտրության կարգում որդեգրած մասանկցային ժողովրդավարության ռազմավարությունից: Ըստ առաջարկվող նոր կարգավորման կրկին տնօրենի ընտրության հարցը տեղափոխվում է սահմանափակ մարդականցով բաղկացած մասնագիտական հանձանաժողովների տիրույթ, ինչը ակնհայտորեն կոռուպցիոն ռիսկեր է պարունակում, ինչպես նաև խզում է պետություն-լիազոր մարմին- տեղական ինքնակառավարման մարմին-հանրակրթական ուսումնական հաստատություն կոնսենսուսային կապը: Մեր երկրում հանրկրթության կարևորագույն բնագավառում առաջացած խնդիրները համակարգային առումով կարող էին

8 https://mitk.am/2022/04/18/%D6%83%D5%B8%D6%83%D5%B8%D5%AD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%9D-%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81%D5%AB-%D5%BF%D5%B6%D6%85%D6%80%D5%A5%D5%B6%D5%AB-%D5%A8%D5%B6%D5%BF/

լուծում ստանալ, եթե առաջարկվող մեխանիզմներում առաջացած խցանումները կարգավորվեին՝ ապահովելով համակարգի բնականոն գործունեությունը, այլ ոչ թե համակարգից արհեստականորեն հեռացնեին ժողովրդավարական տարրերը: Որևէ մեկի համար կասկած չի հարուցում, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարության և պատկան այլ մարմինների համատեղ աշխատանքի արդյունքում պետական ուսումնական հաստատությունների տնօրենի ընտրության կարգի ՀՀ կառավարության 2010թ 319-ն որոշման մեջ կատարված էական բարեփոխումները տարատեսակ օբյեկտիվ, իսկ հիմնականում սուբյեկտիվ գործոններով պայմանավորված խնդիրների տեղիք է տվել՝ մի շարք դպրոցներում տարածելով անիշխանության վտանգավոր շղարշը: Սակայն վերոգրյալով հանդերձ՝ հրաժարումը պետական հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման ժողովրդավարական մեթոդաբանությունից հետագայում շատ ավելի մեծ խնդիրներ է ստեղծելու՝ ոլորտը դնելով անարդյունավետության վտանգավոր տեղապտույտի մեջ, ինչպես որ ներհասարակական շատ այլ ոլորտներ են հիմա գտնվում փոփոխությունների մինչև վերջ տաննելու կամքի բացակայության պատճառով:

Ընդհանուր ենթաօրենդրական ակտ՝ կառավարության որոշմամբ, ձևավորված մասնագիտական հանձնաժողովի աշխատանքը մի շարք հարցեր է առաջացնում:

Ա. Արդյոք այդ հանձնաժողովը պաշտպանված է լինելու օրվա քաղաքական իշխանության առարկայական իմպերատիվից՝ ապահովելով ծրագրային մրցակցություն առաջացած թափուր պաշտոնի հավակնորդների միջև

Բ Տվյալ հանձնաժողովը կոստանտ է, թե յուրաքանչյուր առանձին դեպքի հետ կապված ձևավորվելու է նոր հանձնաժողով

Գ.Ի՞նչ հիմքով են գործող տնօրենները ազատվում լիցենզավորվելու պահանջից, կա արդյո՞ք վիճակագրություն, թե ինչքան անորակ տնօերններ են զրկվել իրենց զբաղեցրած պաշտոնից՝ չկարողանալով հաղթահարել արտոնագրման հարցաշարերը:

Դ. Մանկավարժական և ծնողական համայնքների մասնակցությունը ուսումնական հաստատության ինքնակառառավարման գործընթացին, ինչ ընթացակարգով է իրականացվելու: Արդյո՞ք հրաժարվելը մանկավարժական և

ծնողական խորհուրդներում դպրոցի զարգացման ծարագրի քննարկումից հրաժարումը մեծ հետընթաց չէ մասնակցային ժողովրդավարության տեսանկյունից:

Ինչևէ, խնդրիների ներկապնակը բազմերանգ է, իսկ լուծման ուրվագծերը խզբզված: ՌԴ նախկին վարչապետ Չեռնոմիրդինը խոսքերը առայն, որ ուզում էինք ավելի լավ, բայց ստացվեց ինչպես միշտ, իրենց առարկայական անդրադարձը ունեցան ՀՀ ԿԳՄՍ նախարարության հանրակրթական բարեփոխումների սույն հետազոտության թեմա հանդիսացող վեկտորային ուղղության վրա: Իհարկե, առաջիկա ամիսներին ընթացակարգային առումով որոշակի շտկումներ կլինեն. կառավարության 2010թ 319-ն որոշումը այս տեսքով չի համապատասխանում ՀՀ Հանրակրթության մասին օրենքին և առաջիկայում ևս մեկ անգամ վերոգրյալ որոշումը կենթարկվի նոր փոփոխության: Սակայն խնդիրը ոչ այնքան սույն որոշման վերջին երկու տարիների փոփոխությունների ոդիսականն է, այլ ՀՀ ԿԳՄՍ նախարարության 2022թ սկզբին որդեգրած ռազմավարությունը, ինչը մասնագետների գնահատմամբ դպրոցի կառավարման ժողովրդավարական մոդելից հրաժարում է նշանակում:

Եզրակացություն

Սույն հետազոտութունը հիմնված է փաստաթղթերի ուսումնասիրության մեթոդի հիման վրա, նպատակ ուներ հանրակրթության բնագավառի առաջնային խնդիրներից մեկի հանգուցալուծման շուրջ վերջին մի քանի տարիներին կատարված թվով երեք փորձերի համեմատական պատկերի կազմելը: Տարիներ շարունակ հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների կառավարման օթյակում առաջացած խնդիրները վստահաբար կարելի էր լուծել քաղաքական կամքի արտահայտման և համապատասխան լրամշակված օրենսդրական փոփոխությունների միջոցով: 2018թ-ին հաջորդած մի քանի ամիսների ընթացքում այս ուղղությամբ ակնայտ էին նշված բնագավառի լիազոր

մարմնի՝ ՀՀ Կառավարության քայլերը, սակայն ժամանակի ընթացքում աստճանաբար նվազող քաղաքական կամքի առաջնապատկերին լրամշակված օրենսդրական փաստաթղթերը ի չիք էին դառնում, իսկ պետական հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման մասնակցային ժողովրդավարության տարատեսակը միֆ, ինչպիսին որ եղել է մեր պետականության քրոնոլոգիայի բոլոր էջերին:

Պատկան մարմինների հետագա քայլերի հաջորդականության և մասնակցային ժողովրդավարության որակական կողմի մասին կանխատեսում անելը հիմա դժվար կլինի, սակայն պետական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգ ընդհանուր ենթաօրենսդրական կարգի փոփոխման երեք փորձերի համեմատական ժամանակագրական պատկերը մտահոգության տեղիք է տալիս, քանի որ դպրոցի կառավարման մասնակցային ժողովրդավարության միտված առաջին առաջին երկու փորձերից հետո պատկան շրջանակները ակնհայտ ետքայլ կատարեցին: Առաջիկա ամիսների սպասվելիք իրադարձություններից մեծապես կախված կլինի հանրակրթական դպրոցի կառավարման ուրվապատկերը:

Թե ինչպիսին կլինի այդ պատկերը ցույց կտա ժամանակը, իսկ ժամանակը մի հաստատուն սովորույթ ունի, այն միշտ ցույց է տալիս:

Գրականության ցանկ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docID=155452
2. https://yerkirmedia.am/hy/article/2021/02/15/33867
3. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգում» փոփոխություն կատարելու մասին նախագիծ
4. https://escs.am/am/news/8631
5. https://www.arlis.am/documentview.aspx?docid=155420

6. https://www.azatutyun.am/a/31803581.html
7. https://168.am/2021/10/12/1591146.html
8. https://mitk.am/2022/04/18/%D6%83%D5%B8%D6%83%D5%B8%D5%AD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%9D-%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81%D5%AB-%D5%BF%D5%B6%D6%85%D6%80%D5%A5%D5%B6%D5%AB-%D5%A8%D5%B6%D5%BF/